

ներուն, այնպիսի ժամանակներու մէջ ուր բառէ մը կախուած էր կեանքը քրիստոնեային՝ Օսմանեան կայսրութեան մէջ:

Հակառակորդները՝ որոնց ղէմ անիկա կը մաքառի, ինչպէս կը տեսնուի, Հոռմի պապերուն պաշտպանեալներն են, որոնք ունին իրենց հետ տակաւին գերազօր կրօնապետի մը չափազանց մեծ ազդեցութեան հմայքը և անոր հպատակող ամենաքրիստոնեայ թագաւորներուն՝ Կ. Պոլսոյ ներկայացուցիչներուն պաշտպանութիւնը:

Գաղափար մը տալու համար թէ Գրիգոր Կեսարացի արեւելցիի մը յատուկ ինչպիսի ամուր հաւատքով, միամիտ հաստատամտութեամբ և կրօնական եռանդով կը մաքառի և կ'ոգորի նենգաժէտ տարրերու ղէմ, կը բաւէ կարգալ 1613 Հոկտեմբեր 20 թուակիր երկու նամակները Պօղոս Ե. պապին, մին ուղղուած առ Զաքարիա վարդապետ «առաջնորդ ի Կոստանդնուպոլիս քնակող Հայոց եկեղեցւոյն» և միւսն՝ Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպանին:

Այդ նամակներուն մէջ կը տեսնենք թէ Հոռմի քահանայապետը, որ քիչ առաջ պարզապէս իր և իր հետեւորդներուն ցոփակեաց կենցաղի պատճառած գայթակղութիւններուն համար ապաժամ Մաղկազարդի մը օրով անմիջապէս Հոռմէն ար-